

Ժողովուրդ

144
(2810)

13 հոկտեմբերի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

✉ ք. Երևան, Արվյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com


100 դրամ

ՊԵՆ ՓՈԽՆԱԽԱԳԱՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ




ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուստամ Բադալյանի առաջին տեղակալ Ե. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ Արտյոմ Սմբատյանը հայտարարագրել է մեկ բնակարան, որը ձեռք է բերել հեղափոխությունից հետո 31 մլն 244 հազար դրամով «Սահակյան2ին» ՓԲԸ-ից Երևանի Կենտրոն վարչական շրջանի բազմաբնակարան շենքում: Սմբատյանը պաշտոնավարման ընթացքում 2020 թվականին, ձեռք է բերել 2016 թվականի արտադրության Mercedes Benz մակնիշի ավտոմեքենա: Փոխնախագահ Սմբատյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 20 մլն դրամ: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 670 հազար դրամ: Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 19 մլն 392 հազար դրամ, որից 18 մլն 946 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից: Եկամտի մյուս մասը՝ 446 հազար դրամը, Սմբատյանը ստացել է ՀՀ ֆինանսների նախարարությունից, ըստ երեւոյթին, որպես եկամտահարկի վերադարձ հիփոթեքի մայր գումարի մարման համար: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը կազմել է 20 մլն 344 հազար դրամ, որը բնակարանի հիփոթեքի գումարի մնացորդն է: Արտյոմ Սմբատյանը հանգստի համար ծախսել է 6 մլն 590 հազար դրամ: Հիշեցնենք, որ Սմբատյանը նախկինում աշխատել է առողջապահական ոլորտում, 2019 թվականին եղել է ՀՀ ԱՆ գլխավոր քարտուղարի պաշտոնակատար: Հիշեցնենք, որ ԱՆ գլխավոր քարտուղարի թափուր հաստիքի համար մրցույթին չի մասնակցել, քանի որ չի համապատասխանել օրենքով նախատեսված պահանջներին: Ստացվում է, որ Սմբատյանը 9 ամիս ապօրինի զբաղեցրել է այս հաստիքը: Արտյոմ Սմբատյանը առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանի հովանավորյալն է եղել եւ այդ պաշտոնում նշանակվել էր նախարարի հետ ունեցած մտերմության շնորհիվ: Նա եղել է նաեւ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, ապա՝ 2021 թվականի օգոստոսից՝ ՀՀ ՊԵՆ նախագահի առաջին տեղակալ, եւ անցել է Տիգրան Ավինյանի շրջապատ: Մինչ այս, ըստ պաշտոնական կենսագրականի, նա 2012-2019 թվականներին համատեղ աշխատանք է կատարել նաեւ ՀՀ ԿԱ ՊԵՆ օպերատիվ հետախուզության վարչությունում: Սմբատյանի կինը՝ Գոհար Մկրտչյանը, ըստ ամուսնու հայտարարագրի, որպես մանկաբարձ-գինեկոլոգ աշխատում է «Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ում, որտեղից էլ, որպես աշխատանքի եկամուտ, ստացել է 4 մլն 908 հազար դրամ, որն էլ եղել է ամբողջ տարվա միակ եկամուտը: Նա 2021 թվականին գնել է 2016 թվականի արտադրության BMW մակնիշի մեքենա: Նախկինում մամուլը գրել էր, որ Պետեկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արտյոմ Սմբատյանի հաշվապահ զոքանջի՝ Կարինե Համբարյանի նյութական վիճակը վերջին տարիներին զգալիորեն բարելավվել է: Ուղղորդում Սմբատյանի զոքանջի ունեցվածքի ընդլայնումը տեղի է ունենում նրա փեսայի՝ պետական համակարգի օղակներով վերել սկսված համընթաց: Եւ այսպես, Սմբատյանի կնոջ մայրը՝ Կարինե Համբարյանը, Երևանի քաղաքապետարանի ենթակայության ներքո գտնվող չորս հիմնարկներում աշխատում է որպես հաշվապահ: Նա Միսաք Մեծաբենցի անվան 146 հիմնական դպրոցի հաշվապահն է: Համբարյանը հաշվապահ է նաեւ Երևանի Ա. Տիգրիսյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոցում եւ 2021-ի հունվարից, Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի որոշմամբ, ընդգրկվել է նաեւ դպրոցի կառավարման խորհրդում՝ որպես քաղաքապետի ներկայացուցիչ: Համբարյանը «Զարթոնք» գեղագիտական դաստիարակության ՀՈԱԿ-ում եւ Երևանի 49-րդ մանկապարտեզում եւս որպես հաշվապահ է ձեւակերպված:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Երևանի ավագանու ԶՊ խմբակցության անդամ, նախկին փոխքաղաքապետ Լեւոն Հովհաննիսյանը մոտ 1 ամիս առաջ դիմել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն մուտքի վիզա ստանալու համար: Մեր աղբյուրներով՝ վերջինս թեեւ երկրից մշտական մեկնելու մտադրություն չունի, բայց հաճախ է լինում ԱՄՆ-ում: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Լեւոն Հովհաննիսյանը չմեկնաբանեց այս տեղեկությունը՝ ասելով, թե անձնական տվյալ է: «Ես տարբեր դեսպանատներ անձնական կամ աշխատանքային հարցերով դիմում եմ, բայց ես համարում եմ դա անձնական տվյալ, չեմ ուզում մեկնաբանել: Հայաստանից մշտական մեկնելու մտադրություն, բնականաբար, չունեմ, բայց ոչ ԱՄՆ -ի, ոչ էլ մյուս երկրների մասով չեմ ուզում մեկնաբանել. դա համարում եմ անձնական տվյալ: Տարբեր դեսպանատների հետ աշխատանքային կարգով, լինում է, որ դիմում եմ աշխատանքային վիզայի համար», -ասաց նա:



ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի գործունեությունից դժգոհությունները գնալով ավելանում են: Բանն այն է, որ մասնագիտությամբ իրավաբան նախարարը սկսել է պարտվել դատարաններում, ինչը լրացուցիչ անգամ նրա նկատմամբ լարվածություն է առաջացրել: Վերջին թարմ օրինակը «Թոքաբանության ազգային կենտրոն»-ի տնօրենի դեպքն է, եւ կենտրոնի տնօրեն Արտակ Մանուկյանը պետք է վերականգնվի այդ պաշտոնին, այսինքն՝ նախարարը պարտվել է դատարանում: Մինչ այդ Ծաղիկ Վարդանյանն էր հաղթել նախարարին եւ վերականգնվել Առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետի պաշտոնում: Ստացվում է՝ իրավաբան-նախարարը չի կարողանում այնպիսի որոշումներ կայացնել, որոնց համար հետագայում չհայտնվի դատարաններում: Մյուս կողմից՝ նրա վրա կենտրոնացել է անգամ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Որքան էլ Ավանեսյանը փորձում է կառավարության նիստերին կամ առհասարակ ակտիվ լինել, հայտնվել ամենուր, որտեղ լինում է Նիկոլ Փաշինյանը, նրա աշխատանքից դժգոհ են: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրներն ասում են, որ այժմ քաղաքական իշխանություններն առողջապահության նախարար են փնտրում:



Սեպտեմբերի 27-ին՝ Լաչինի անցակետը հատելիս, ապօրինի կերպով գերեզմաններ էր Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը: Ավելի ուշ պարզվեց, որ նրան 3 մեղադրանք է ներկայացվել, եւ ադրբեջանական դատարանը Արցախի նախկին պետնախարարին 4 ամսով կալանավորելու որոշում է կայացրել: Հոկտեմբերի 9-ին Բաքվի դատարանը մերժել էր նրա փաստաբան Աֆատ Գազիեւայի ներկայացրած վերաքննիչ բողոքը, այն է՝ փոխել իր պաշտպանչալի խափանման միջոցը: Այսպիսով, Ռուբեն Վարդանյանը կշարունակի մնալ կալանքի տակ: «Ժողովուրդ» օրաթերթին «Արելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մեսրոպ Առաքելյանն ասաց, որ այս պահին գործընթաց է գնում ՄԻԵԴ-ում՝ Հայաստանի դիմումի հիման վրա, բայց դեռ որեւէ ազդեցություն չկա: «Որեւէ արդյունք մինչ այժմ չունենք. ոչ միայն գերիների, այլ նաեւ բազմաթիվ այլ հարցերով միջազգային ատյանների որոշումները Ադրբեջանի վրա էական ազդեցություն չեն ունենում: Բոլորս էլ հասկանում ենք, որ իրավական առումով դժվար է հարցի կարգավորումը: Ամեն դեպքում, տարբեր ուղղություններով փորձ արվում է», - ասաց նա: Ունգոթենք, որ Ռուբեն Վարդանյանի պաշտպանության գործընթացն իրականացնում է ադրբեջանցի փաստաբան Աֆատ Գազիեւան, հայազգի կամ միջազգային փաստաբաններ ներգրավված չեն: «Ադրբեջանի, ինչպես նաեւ մյուս երկրների օրենսդրությամբ՝ միայն պետության կողմից տրամադրված, գրանցված փաստաբանները կարող են պաշտպանությամբ զբաղվել. այլ փաստաբաններ չեն կարող ներգրավվել», - հավելեց Առաքելյանը: Հիշեցնենք, որ Ռուբեն Վարդանյանը հոկտեմբերի 6-ին հեռախոսազրույց էր ունեցել կնոջ հետ: Այն մասին, թե զրույցում ինչ է պատմել Վարդանյանը, Մեսրոպ Առաքելյանն ասաց՝ կարճատեւ հեռախոսազրույց է եղել, Վարդանյանը տեղեկացրել է, որ առողջությունը բավարար վիճակում է. այլ մանրամասներ հայտնի չեն:



ԶԵՐԲԱԿԱԼՎԵՑԻՆ

5 ԱՆՁ՝ ԿԱՇԱՌՔ ՏԱԼՈՒ ՄԵՂԱԴԻՐԱՆՔՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի սեղեկու-
բյուններով ՀՀ քաղաքացիության,
սեխնիկական եւ հրդեհային անվան-
գույքան սեսչական մարմնի (ՔՏՀԱ)
դաստնասար անձանց կողմից կա-
առք սահմայու դեղերի առթիվ ՀՀ
ազգային անվանգույքան ծառայու-
բյունում նախաձեռնված եւ ՀՀ հա-
կապուղուցիոն կոմիտեում իրակա-
նացվող ֆրեական վարույթով բացա-
հայտվել են հիշյալ սեսչական մարմնի,
ինչպես նաեւ ոստիկանության դաստ-
նասար անձանց կառաք սալու նոր դ-
վագներ:



Մասնավորապես, քրեական վարույ-
թով փաստական տվյալներ են ձեռք բեր-
վել այն մասին, որ 2023 թվականի հուն-
վարի 20-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության
«Ճանապարհային ոստիկանություն»
ծառայության տեսուչ Մ. Գ-ն Երեւան-
Մեղրի մայրուղու՝ Սիսիան համայնքի
հատվածում տեղակայված ՔՏՀԱ տես-
չական մարմնի անշարժ հենակետի տա-
րածքում ծառայություն իրականացնելիս
ՀՀ քաղաքացի Մ. Թ.-ից կաշառք է ստա-
ցել վերջինիս վարած գերբեռնված
տրանսպորտային միջոցն առանց կշռ-
ման եւ առանց խոչընդոտների հենակե-
տով անցկացնելու համար:

ՊՊԾ դասակի ոստիկան Հ. Բ.-ն ՔՏՀԱ
տեսչական մարմնի վերը նշված նույն
հենակետի տարածքում ծառայություն
իրականացնելիս ՀՀ քաղաքացի Մ. Թ.-ի,
ինչպես նաեւ ԻԻՀ երկու քաղաքացիներ
ի վարած գերբեռնված տրանսպորտա-
յին միջոցներն առանց կշռման եւ առանց
խոչընդոտների հենակետով անցկացնե-
լու համար կաշառք է ստացել Մ. Թ.-ից,
իսկ նույն դասակի ոստիկան Կ. Գ.-ն էլ դր-
դել է Մ. Թ.-ին խմբով կաշառք տալ ՔՏ-
ՀԱ տեսչական մարմնի աշխատակցին:

Փաստական տվյալներ են ձեռք բերվել
նաեւ այն մասին, որ 2023 թվականի
փետրվարի 23-ին «MAN» բեռնատարի
վարորդ Կ. Մ.-ն բեռների կշռման վերը
նշված հենակետն առանց խոչընդոտի
անցնելու եւ իր նկատմամբ վարչական
իրավախախտման վերաբերյալ արձա-
նագրություն չկազմելու, այն է՝ ապօրինի
անգործության դիմաց հիշյալ հենակետի
հերթափոխում ընդգրկված ՔՏՀԱ տես-
չական մարմնի պաշտոնատար անձ Ա.
Մ.-ին խոստացել է կաշառք տալ:

ՔՏՀԱ տեսչական մարմնի պաշտոնա-
տար անձ Գ. Գ.-ն էլ, ընդգրկված լինելով
անշարժ հենակետի հերթափոխում եւ
գտնվելով կշռման կետում, չի կատարել
իր ծառայողական պարտականությունե-
րը, այն է՝ միջոցներ չի ձեռնարկել Մ. Թ.-ի
վարած՝ պետական ավտոմոբիլային ճա-
նապարհով թույլատրելի առավելագույն
զանգվածը գերազանցող, գերբեռնված
բեռնատարը կանգնեցնելու եւ կշռելու
ուղղությամբ եւ, ըստ այդմ, վարչական
իրավախախտման վերաբերյալ արձա-
նագրություն չի կազմել, որի արդյունքում
Մ. Թ.-ն տուգանքի չի ենթարկվել:

Նախաքննությամբ պարզվել է նաեւ,
որ 2023 թվականի փետրվարի 20-ին ՀՀ
ՆԳՆ ոստիկանության Սիսիանի բաժնի

ԿԱՐԵՎՈՐ

ՔՈՉԱՐՅԱՆԸ՝
ՔՆՆՉԱԿԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույ-
ցում ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ
Քոչարյանի որդու՝ Լեւոն Քոչարյանի
գործով փաստաբան Էրիկ Ալեքսանյանը
հայտնեց, որ հոկտեմբերի 11-ին ՀՀ քնն-
չական կոմիտե են տարել Լեւոն Քոչար-
յանին:



կայացրել, որ Լ. Քոչարյանը 4 կարմիրբե-
րետավորի է ծեծել:
Լեւոն Քոչարյանը սեպտեմբերի 25-ին 1
ամսով կալանավորվել է, եւ նրա պաշտ-
պանները դիմել էին ՀՀ վերաքննիչ դա-
տարան, գործը մակագրվել է իշխանու-
թյունների սրտով որոշում կայացրած
դատավոր Միեր Արղամանյանին:

ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝
ՀՐԱԶԳԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկու-
թյուններով՝ սպանություն է տեղի ունեցել
Հրազդանի Վանատուր թաղամասում:
Մեց հասած տեղեկությունների համա-
ձայն՝ վարձակալած բնակարանում երկու
հոգի օգտագործել են մեծ քանակությամբ
ոգելից խմիչք, որից հետո սկսվել է կռիվ:
1959 թվականին ծնված տղամարդը
դաժանաբար ծեծել է 1984 թվականին ծն-
ված տղամարդուն, տարբեր մետաղյա
գործիքներով հարվածել գլխին, որն էլ
ստացած հարվածներից մահացել է: Մեզ
հասած տեղեկությունների համաձայն՝
կատարողին գիշերը ձերբակալվել են:

Այնտեղ նա առերեսվել է իր գործով
անցնող երկու ոստիկանների հետ: Ըստ
փաստաբանի՝ առերեսումից հետո առա-
վել ակնհայտ դարձավ մեկ բան, որ Լեւոն
Քոչարյանի դեմ հարուցված քրեական
գործն ապօրինի է:
Փաստաբանը նշեց, որ մնացած ման-
րամասներն այսօրվա ասուլիսին կհայտ-
նեն, որտեղ կանդադարանան Լեւոն Քո-
չարյանի քրեական գործի մի շարք հան-
գամանքներին: Կներկայացնի տեղի ու-
նեցած ակնհայտ խախտումների, ապօ-
րինի կալանքի ու քրեական գործի ըն-
թացքի վերաբերյալ մանրամասներ:
Հիշեցնենք, որ ասուլիսը տեղի է ունե-
նալու այսօր՝ ժամը 11:00-ին, Կոնգրես
հյուրանոցի սրահում:

ՈՒՇԱԳՐԱՎ

Ո՞Վ Է
ՀԱՐՉԱԿՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է
հասարակական ակտիվ գործունեու-
թյուն իրականացնող Արթուր Չախո-
յանի հետ: Նա հանրությանն ավելի
շատ հայտնի է որպես Երեւանի քա-
ղաքապետարանի կողմից հայտարար-
ված շինարարական մրցույթները, ճա-
նապարհի եզրաքարերի, ասֆալտի
որակի քննադատող: Այս տարվա հոկ-
տեմբերի 9-ի երեկոյան Արթուր Չախո-
յանի վրա երեք մարդ է հարձակվել,
որից մեկին Արթուրը վնասազերծել է
եւ հանձնել ոստիկաններին: Արթուրն
այդ հարձակումը որակում է մահա-
փորձ: Իրավապահ մարմիններն Ար-
թուրի կողմից վնասազերծված անձին
բաց են թողել:

Արթուր Չախոյանի խոսքով՝ իր դեմ
մահափորձ կատարած անձինք ազա-
տության մեջ են, ու ինքն իրեն ապա-
հով չի զգում:

Նա իր հարձակումը կապում է հա-
սարակական ակտիվ գործունեության
հետ, սակայն չի պատրաստվում լռել:

Նշենք, որ քննչական կոմիտեն հա-
ղորդագրություն տարածեց, որ Ար-
թուր Չախոյանի հաղորդման հիման
վրա ձեռնարկված միջոցառումների
արդյունքում պարզվել է առերեսույթ
դանակով հարձակված անձի ինքնու-
թյունը, որը հանդիսանում է Երեւան
քաղաքի բնակիչ:

Նույն օրը՝ ավելի ուշ, հաղորդում է
ստացվել նաեւ Երեւան քաղաքի նշ-
ված բնակչից, որ ինքը, տեղեկանա-
լով, որ կա անձ, որը ստասկապետ ու
ինչ-որ ինֆորմացիաներ է ուղարկում
ադրբեջանցիներին, փորձել է հանդի-
պում ունենալ նշված անձի հետ, ում
ինքն անձնապես չի ճանաչում:

Հանդիպման ընթացքում, ըստ հա-
ղորդման, կոնֆլիկտ է առաջացել, ին-
չի հետեւանքով ինքը ստացել է մարմ-
նական վնասվածքներ:

Առաջին հաղորդման հիման վրա՝
Հայաստանի Հանրապետության քնն-
չական կոմիտեի Ավան եւ Նոր Նորք
վարչական շրջանների քննչական
բաժնում նախաձեռնվել է քրեական
վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 194-
րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի
(զենքի կամ մարմնական վնասվածք
պատճառելու համար նախապես
պատրաստված կամ հարմարեցված
առարկայի կամ միջոցի գործադրմամբ
հոգեկան ներգործություն) եւ 195-րդ
հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի (մի
խումբ անձանց կողմից ֆիզիկական
ներգործություն), իսկ երկրորդ հա-
ղորդման հիման վրա՝ 171-րդ հոդվածի
1-ին մասի 1-ին կետի (առողջությանը
թեթեւ վնաս պատճառելը, որն առա-
ջացրել է առողջության կարճատեւ
քայքայում) հատկանիշներով, որոնք,
օբյեկտիվ եւ բազմակողմանի քննու-
թյուն կատարելու նպատակով միաց-
վել են մեկ վարույթում համատեղ քն-
նություն կատարելու համար:

Հաղորդում ներկայացրած երկու ան-
ձանց նկատմամբ նշանակվել են դա-
տաբժշկական փորձաքննություններ:
Նշված վարույթով ձերբակալված անձ
չկա:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 10-ից 11-ը Հայաստանի Հանրապետությունում բա-
ցահայտվել է հանցագործության 65 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:



Էջը՝ ՄԱՐԻԱՍ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԱՐԺՈՒՅԹ

ՀԱՐՑ. Ինչո՞վ են դայմանավորված ՀՀ դրամի փոխարժեքի սասանումները:
Անդրանիկ Չախոյան (56 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ազատ լողացող փոխարժեքի ռեժիմի պայմաններում ազգային արժույթի փոխարժեքը ձեւավորվում է արժույթային շուկայում առկա առաջարկի ու պահանջարկի եւ դրանց փոփոխությունների ազդեցության ներքո: Եթե արտահանման աճի կամ կապիտալի ներհոսքի հետեւանքով տվյալ ազգային արժույթի շուկայում ավելանում է արտարժույթի առաջարկը, ազգային արժույթի դիրքերն անհրաժեշտաբար ամրապնդվում են: Համապատասխանաբար, ներմուծման աճը կամ կապիտալի արտահոսքը նպաստում են ազգային արժույթի դիրքերի թուլացմանը: Արժույթային շուկայում առկա առաջարկն ու պահանջարկը կարող է փոփոխվել նաեւ մի շարք այլ գործոնների ազդեցության ներքո, որոնցից են, մասնավորապես, կառավարության ծախսերը, Կենտրոնական բանկի ինտերվենցիաները, արժույթային կարգավորման ոլորտում օրենսդրական փոփոխությունները, էներգակիրների գների տատանումները, բնակչության մոտ ձեւավորվող սպասումները:

ՀՀ ԿԲ

«ԺՈՂՎՈՒՐԳ». Փոխարժեքի փոփոխությունը կարող է լինել բավականին տեսական, երբ այն պայմանավորված է երկարաժամկետ բնույթի գործոններով (օրինակ՝ կայուն տնտեսական աճով պայմանավորված ազգային արժույթի արժեքավորումը), կարող է կրել սեզոնային բնույթ (երբ, օրինակ, ներմուծման ու արտահանման սեզոնները տարբեր են) եւ կարող է լինել կարճաժամկետ, երբ այն կարճաժամկետ գործոնների (օրինակ՝ կարճաժամկետ ֆինանսական ներհոսքի կամ արտահոսքի) ազդեցության արդյունք է:

ԸՆԹԱՅՈՒՆԱԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչո՞վ են դեռահաս եւ համայնքային սեփականության հողերի օտարման ընթացակարգերը:

Արզամ Գալստյան (30 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Պետության եւ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքը, բացառությամբ հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու եւ ուղղակի վաճառքի դեպքերի, կատարվում է աճուրդով: Աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել հողի կադաստրային արժեքի 50 տոկոսից, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային, ծայրամասային բնակավայրերում աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ հողի կադաստրային արժեքի 30 տոկոսից: Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի կամ դրանց առանձին հատվածների աճուրդով վաճառքի մեկնարկային գինը հայտարարում է համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու որոշման հիման վրա:

ՀՀ ՏԿԵՆ

«ԺՈՂՎՈՒՐԳ». Աճուրդների կազմակերպման եւ իրականացման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հողային օրենսգրքով եւ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Հայաստանի Հանրապետության Նախագահ Վահագն Խաչատրյանի հրամանագրով Գավառ քաղաքի բնակիչ, հայոց բանակի զինառայող, արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից Արտյոմ Հովհիկի Մելքոնյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով, այս մասին հայտնում են Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից:

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել



«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ

հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր Նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
 Ազգանուն՝ _____
 Առաքման հասցե՝ _____
 Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	-2 + 2 +14 + 16	Արարատ	+ 6 + 8 +19 + 22
Կոտայքի լեռներ	-2 + 3 +13 + 16	Արմավիր	+ 5 + 7 +19 + 23
Կոտայքի Նախալեռներ	+ 3 + 5 +15 + 19	Վայոց ձորի լեռներ	- 1 + 2 +14 + 17
Գեղարքունիք	- 1 + 3 +13 + 17	Վայոց ձորի Նախալեռներ	+ 6 + 8 +18 + 20
Լոռի	-2 + 2 +13 + 16	Սյունիքի հովիտներ	+ 6 + 9 +19 + 22
Տավուշ	+ 2 + 6 +15 + 19	Սյունիքի Նախալեռներ	0 + 3 +14 + 18
Արագածոտնի լեռներ	- 1 + 2 +11 + 15	ԼՂՀ	+ 5 + 9 +19 + 23
Արագածոտնի Նախալեռներ	+ 3 + 6 +16 + 19	Երեւան	+ 6 + 9 +19 + 22

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
 Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22^Պ/3, հեռ.՝ 010 54-64-23
 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
 տրված է 24.11.2010
 Ստորագրված է տպագրության 12.10.2023

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
 խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնաչափվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: